Իրավ 4 863-Ա12

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 473
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«25» «10» 2019 թ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Գ. Գրիգորյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել աբոնեմենտային ծրագրի շրջանակներում 2019 թվականի երկրորդ եռամսյակի ծախսերի փոխհատուցմանը՝ համաձայն Պատվիրատուի կողմից հաստատված ծրագրի և պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածի:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Արվեստների ծրագրի» «Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

**2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

**2.3. Կատարողը պարտավոր է՝**

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.2. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական

հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (հաշվարկի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին:

2.3.3. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ միջոցառման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամփոփ տեղեկույթ՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.4. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածի համաձայն կնքել գումարի փոխհատուցման պայմանագրեր նշված կազմակերպությունների հետ:

**2.4. *Կատարողը իրավունք ունի՝***

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 29854.8 (քսանինը միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն պայմանագրի հավելվածի:

3.2 Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում, գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար

խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2020 թվականի փետրվարի 5-ը:

6.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը:

## 7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրը կազմված է 5 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

## 9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Երևան, Վազգեն Սարգսյան 3<br>Կառավարական տուն 2<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024313 ՀՎՀՀ 02698732<br>Գլխավոր քարտուղար՝<br>Ն. Հարությունյան<br>Կ.Տ. | «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ<br>Երևան, Երևան, Հանրապետության հրապարակ 4<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՀ 900018001397, ՀՎՀՀ02514442<br>Տնօրեն՝ Գ. Գրիգորյան<br>Կ.Տ. |

ՀԱՎԵԼՎԱԾ
25 10 2019 թ.
N 473 պայմանագրի

**Աբոնեմենտային ծրագրի շրջանակներում 2019 թվականի երկրորդ եռամսյակի թանգարաններ այցելությունների քանակ և հատկացվող գումար**

| N | Կազմակերպության անվանումը | Աշակերտների քանակ | Ուսուցիչների քանակ | Ընդհամենը | Հատկացվող գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | **ՀՀ մշակույթի ենթակայության թանգարաններ** | **64423** | **4252** | **68675** | **20602,5** |
| 1 | «Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ | 757 | 66 | 823 | 246,9 |
| 2 | «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ | 5454 | 855 | 6309 | 1892,7 |
| 3 | «Օրբելի եղբայրների տուն- թանգարան»ՊՈԱԿ | 1192 | 111 | 1303 | 390,9 |
| 4 | «Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ | 4519 | 266 | 4785 | 1435,5 |
| 5 | «Հրազդանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ | 206 | 8 | 214 | 64,2 |
| 6 | «Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան» ՊՈԱԿ | 1174 | 82 | 1256 | 376,8 |
| 7 | «Հովհաննես Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ | 8612 | 430 | 9042 | 2712,6 |
| 8 | «Մ. Սարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ | 2990 | 147 | 3137 | 941,1 |
| 9 | «Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ | 1676 | 76 | 1752 | 525,6 |
| 10 | «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ | 7419 | 665 | 8084 | 2425,2 |
| 11 | «Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ | 1505 | 93 | 1598 | 479,4 |
| 12 | «Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ | 11789 | 551 | 12340 | 3702 |
| 13 | «Փայտարվեստի թանգարան» ՊՈԱԿ | 789 | 43 | 832 | 249,6 |
| 14 | «Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ | 1036 | 57 | 1093 | 327,9 |
| 15 | «Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ | 396 | 21 | 417 | 125,1 |
| 16 | «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ | 5560 | 342 | 5902 | 1770,6 |
| 17 | «Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)» ՊՈԱԿ | 285 | 14 | 299 | 89,7 |
| 18 | «ԱլեքսանդրՍպենդիարյանիտուն-թանգարան» ՊՈԱԿ | 874 | 20 | 894 | 268,2 |
| 19 | Կոմիտասի թանգարան -ինստիտուտ» ՊՈԱԿ | 5318 | 262 | 5580 | 1674 |
| 20 | Եղիշե Չարենցի տուն-թանգարան | 2872 | 143 | 3015 | 904,5 |
| | **Այլ ենթակայության թանգարաններ** | **13473** | **782** | **14255** | **4276,5** |
| 21 | «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ | 1955 | 109 | 2064 | 619,2 |
| 22 | «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ | 2140 | 128 | 2268 | 680,4 |
| 23 | «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ | 44 | 4 | 48 | 14,4 |
| 24 | «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ | 28 | 4 | 32 | 9,6 |
| 25 | «Մատենադարան. Մ. Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ | 2988 | 152 | 3140 | 942 |
| 26 | «Պարույր Սևակի տուն-թանգարան» ՀՈԱԿ | 956 | 48 | 1004 | 301,2 |
| 27 | Հ. Կարապետյանի անվան Երկրաբանական թանգարան | 374 | 20 | 394 | 118,2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Գեղարքունիքի երկրագիտական թանգարան | 1369 | 70 | 1439 | 431,7 |
| 29 | Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան | 966 | 45 | 1011 | 303,3 |
| 30 | Ստեփան Զորյանի տուն-թանգարան | 398 | 30 | 428 | 128,4 |
| 31 | «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ | 774 | 45 | 819 | 245,7 |
| 32 | «Դիլիջանի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ | 643 | 37 | 680 | 204 |
| 33 | «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ | 838 | 90 | 928 | 278,4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | **77896** | **5034** | **82930** | **24879.0** |
| | **ԱԱՀ** | | | | **4975.8** |
| | **Ամբողջը՝** | | | | **29854.8** |

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝** | **ԿԱՏԱՐՈՂ՝** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Երևան, Վազգեն Սարգսյան 3<br>Կառավարական տուն 2<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024313 ՀՎՀՀ 02698732<br>Գլխավոր քարտուղար՝<br>**Ն. Հարությունյան**<br>Կ.Տ. | «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ<br>Երևան, Հանրապետության հրապարակ 4<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՀ 900018001397, ՀՎՀՀ02514442<br>Տնօրեն՝ **Գ. Գրիգորյան**<br>Կ.Տ. |